ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 2 >> հունիսի 2015 թվական N: 97-Ա ք.Գյումրի

<<ՀՈՌՈՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի և ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետների 2015 թվականի մայիսի 13-ին ներկայացրած զեկուցագիրը՝ աշխատանքի կազմակերպման գործընթացում տեղ գտած թերությունների և բացթողումների վերաբերյալ, և անհիմն համարելով <<Հոռոմի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2015 թվականի մայիսի 14-ի բացատրագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար <<Հոռոմի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռուզաննա Արզումանյանին հայտարարել նկատողություն:

2. <<Հոռոմի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռուզաննա Արզումանյանին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ նմանօրինակ թերություններն ու բացթողումները բացառելու նպատակով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝